

Հարգելի այցելու

Բարի գալուստ Հայոց Գերագույն Օթյակի Ազատ և Ընդունված Որմնադիրների պաշտոնական կայք:

Հայոց Գերագույն Օթյակը Հայաստանի Հանրապետության տարածքում միակ կանոնավոր, ինքնիշխան և ճանաչված որմնադրական կազմակերպությունն է:

Ազատ Որմնադրությունը աշխարհի հնագույն և ամենամեծ ոչ-կրոնական, ապաքաղաքական, եղբայրական ու բարեգործական կազմակերպություններից մեկն է, որի անդամները բարոյական բարձր արժեքների ժառանգության կրողներն են: Այն ուսուցանում է ճշմարտության, արդարության, եղբայրության, մարդասիրության հիմնարար գաղափարները, հանդես է գալիս լուսավորչական նախաձեռնություններով և մարմնավորում քաղաքացիական, կրոնական և մտավոր ազատության սկզբունքները: Կազմակերպությունը պահանջում է իր անդամներից լինել ճշմարիտ և հավատարիմ այն երկրի նկատմամբ, որի իրավասության տակ նրանք ունեն պարտավորություններ և հորդորում է հնազանդվել այդ երկրի համապատասխան օրենքներին:

Որմնադրությունը ոգեկոչում է իր անդամներին դեպի արժեքային այնպիսի համակարգեր, որոնք հիմնված են ազնվության, բարության, ճշմարտացիության և արդարության սկզբունքների վրա: Ընտանիքի շահերը համարելով առաջնային, Որմնադրությունը իր անդամներին ուսուցանում է լինել հոգատար նաև բոլոր մարդկանց հանդեպ, աջակցություն ցուցաբերել առավել խոցելի անձանց և օգնել կարիքավորներին:

2002թ հուլիսի 30-ի պատմական օրը, մայրաքաղաք Երևանում, Ազատ և Ընդունված Որմնադիրների Հայոց Գերագույն Օթյակը պաշտոնապես օժվեց Վաշինգտոնի Գերագույն Օթյակի, Ֆրանսիայի Ազգային Գերագույն Օթյակի և Ռուսաստանի Գերագույն Օթյակի կողմից՝ վկայությամբ Ռումինիայի Գերագույն Օթյակի և Իտալիայի Գերագույն Արևելքի :

Տարիներ ի վեր և առաջին անգամ պատմության մեջ, Հայոց Որմնադրությունը ունեցավ իր սեփական իրավասությունն ու որմնադրական ինքնավարությունը հայրենի երկրում: Այսօր, Հայոց Գերագույն Օթյակի օթյակների թիվը երեքից աճել է և դարձել տասնմեկը, այդ թվում՝ մեկ դաստիարակչական-ուսումնասիրական Օթյակ՝ Հայաստանում և ևս երկու Օթյակ՝ Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում: Հայոց Գերագույն Օթյակը երկուստեք ճանաչված է աշխարհի 63 Գերագույն Իրավասությունների կողմից և բարձր հեղինակություն է վայելում Որմնադրական միջազգային համայնքի կողմից:

Հայոց Գերագույն Օրթակը նաև քաջալերում է ողջ աշխարհում ապրող հայ և ոչ հայ որմնադիրների անդամակցությունը և նրանց ներգրավումը Հայոց Գերագույն Օրթակի աշխատանքներին՝ համաշխարհային եղբայրության մեջ միջազգային հարաբերություններում շեշտելով իր ուրույն դերը:

Այսօր արդեն ժամանակն է տոնելու, վկայակոչելով մեր անցյալի ժառանգությունը՝ կենտրոնանալու մեր ներկայի վրա և աշխատելու մեր պայծառ ապագայի համար:

Թող Տիեզերքի Մեծ Ճարտարապետի օրհնությունը լինի ձեր վրա բոլոր ժամանակներում:

Կարեն Հակոբյան

Հայոց Գերագույն Օրթակի
Գերագույն Վարպետ

Հայոց Ազատ Որմնադիրների շարժման մասին ամենավաղ արձանագրված տեղեկությունը հետևյալն է. "Դոկտոր Դիոնիսիուս Մանասը, համաձայն Անգլիայի Սահմանադրության, 1764թ Գերագույն Մ. Վարպետ Ըրլ Ֆերերսի կողմից նշանակվել է Հայաստանի Շրջանային Գերագույն Վարպետ":

2001թ. մայիսին ԱՄՆ-ի մայրաքաղաք Վաշինգտոնում հրավիրվել է Հայոց Որմնադրության համաշխարհային համագումար: Այս համաժողովում ներկայացված էին հայ որմնադիրներ՝ Ֆրանսիայից, Անգլիայից, Ռուսաստանից, Արգենտինայից, Լիբանանից և ԱՄՆ-ից: Հայաստանի իշխանությունների հետ ծավալուն քննարկումներից հետո հաստատվեցին և ստացվեցին բոլոր անհրաժեշտ իրավական փաստաթղթերը և Հայոց Գերագույն Օրթակը պաշտոնապես գրանցվեց Հայաստանում: